


ՊԱՅՄԱՆՔ

Յարեկան գին Կ. Պոլսոյ հմր. 10 Մէճ.
Գաւառաց. 2 1/2 Մէճ.
Վեցամս. Կ. Պոլսոյ 5 Մէճ.
Գաւառաց. 1 1/2 Մէճ.
Օտար երկիրներու 50 Մէճ.
Շաւուսեան տողը մէկ անգամի հա-
մար 3 զուրուշ, երկու անգամի հա-
մար 2 զուշ է. աւելի անգամներու
համար գատ սակարկութիւն կը-
լայ :
Իւրաքանչիւր թիւ 40 փարա արծ :



ԼՐԱԳԻՐ

ՀԱՆԱՊԱՋՕՐԵԱՅ

ՊԱՅՄԱՆՔ

Դուրս քննարկող լրագրող ճանրու-
ծաւորը խմբագրութեան վրայ է :
Լրագրողս վերաբերեալ նամակ
կամ որ և իցէ գրութիւն խմբագիր
—Տնօրէնին պիտի ուղղուի, զարա-
թիա լրագրութեանը հաւաստի թիւ
198, Նոթո խմբ. Մատենի գրասեն-
եակը :
Ճանրու ծախքը չվճարուած նա-
մակ չընդունուիր :
Չտպուած նամակ, յօդուած, հա-
ետ չեն արտադր :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 16 ՕԴՈՍՏԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Անտրաշի կոմսն իւր հրաժարա-
կանն ետ առաւ և միանգամայն իւր
երեքտասանամեայ պաշտօնավարու-
թեան շրջանին մէջ մատուցած ծա-
ռայութեանց ի վարձատրութիւն «Իշ-
խան» տիտղոսն ստացաւ : Արդեօք
իւր աշխարհավարութիւնը փորձէն
յարթող ելաւ, թէ բոլոր այս հրա-
ժարականի խնդիրը զաւելագոյն մ'էր
միայն : Երկու երկրորդութիւնն ևս
կրնան հաւանական լինիլ : Բայց աւե-
րի ճշմարիտ է թերեւ կարծել թէ Անտ-
րաշի իշխանին աշխարհավարութիւնն
յարթող ելած է : Կոսթէյնի մէջ եր-
կուց կայսերաց տեսակցութեան վը-
րայ՝ Անտրաշիի հրաժարման զրոյցն
եղած էր : Քանի մը տարիէ ի վեր իւր
գիրքը բաւական դժուարացած էր,
և մեծ ջանք պէտք եղած էր վիճն-
նայի և Բէշլիայի մէջ իւր աղբեղութիւ-
նը պահելու համար : Պոստիոյ և Հէր-
սէքի դաւառաց վարչութիւնը Պէր-
լինի դաշնագրութեամբ Աւստրիոյ
արուեստ, և երկու հարիւր հազար
զօրաց բանակ մը միայն կրցաւ Պօշ-
նաքներուն դիմադրութեան յարթել :
Այնուհետեւ Աւստրիա պայմանագը-
րութիւն մը կնքեց Նովի-Պազարի նա-
հանգին մէջ զօրք դնելու համար,
ըստ Պէրլինի դաշնագրին : Պայմանա-
գիրն Աւստրիական զօրաց յառաջաց-
ման սահման կը դնէր Լիմ դետն, ո-
րոյ վրայ ղեկավարական կուսակցու-
թիւնը դժգոհեցաւ, քանզի իւր նը-
պատակին էր քօսով Բօլիէ քաղաքն
և Միթրօվիցային Մէլանիկի գնացող եր-
կաթուղւոյն գլուխը գրաւել, Պալ-
քանի թերակղզւոյն հարաւային ա-
րևմտեան կողմն իշխող աղբեղութիւն
մ'ունենալու համար : Պատերազմի
նախարար Պիլանտթ կոմսին մեծ զօ-
րութեամբ մինչև Միթրօվիցա դը-
րաւելու գաղափարն ընդունելութիւն
չգտնելով, կոմսն հրաժարական տը-
ւած էր : Անտրաշի իշխանն իւր Հուն-
դարացի Աւստրիոյ մէջ Սլավ տար-
րին բաղմանալուն և աղբեղութիւն
գտնելուն քաջաբերութիւն չէր տար,
հետեւաբար ղեկավարական կուսակ-
ցութեան բարձանքը կատարելով երկ-
րակայական աշխարհավարութեան մէջ
առաջ երթալ և Սլավ տարրը զօրա-
ցնել չէր ուզեր : Բայց վերջին երես-
փոխանական ընտրութեանց մէջ Սը-
լավները մեծամասնութիւն կունենա-
լին : Պօշնիայիք՝ այնչափ ժամա-
նակ ձեռնապահութենէ ետեւ՝ առա-
ջին անգամ՝ երեսփոխանական ընտ-
րութեան կը մասնակցէին : Մինչև իսկ
կը կարծուէր թէ Յրանչիսկոս Բօլիսէի
կայսրը Սլավ և Գերմանական տար-

րին յերկու՝ Հունդարիոյ արածու-
թիւնները պիտի նուազեցնէ :
Անտրաշի իշխանը գուցէ զգալով
որ խորհրդարանական մեծամասնու-
թիւնը ձեռքէն պիտի ելնէ, հրաժա-
րական տուաւ : Այսու ամենայնիւ չէր
կրնար ուրաղել իւր 13 տարիէ ի
վեր իւր աշխարհավարութիւնը մեծա-
պէս նպաստած էր Աւստրո-Հունդա-
րիոյ անցեալ կորուստները դարմանե-
լու և համբաւը մեծցնելու : Պիլանտթ
իշխանին հետ իւր յարաբերութիւն
ները իրատ լաւ էին, և հիւսիսային
տէրութեանց աշխարհավարութեան
մէջ Աւստրո-Հունդարիա կարեւոր դեր
մը խաղցած էր : Դեռ այս օրերու եր-
կու նախարարը նորէն տեսակցեցան,
և անշուշտ իրենց լոսակցութիւնն
աշխարհավարութեան վրայ դարձաւ :
Յրանչիսկոս-Բօլիսէի կայսրը չուզեց
անշուշտ թողուլ առաջին նախարար
մը՝ որ կարեւոր ծառայութիւններ ը-
րած էր և աշխարհավարութեան ա-
մեն դաղնեաց տեղեկացած : Ուս-
տի զայն վարձատրեց և իւր վստա-
հութիւնը վերանորոգելով հաստա-
տեց իւր պաշտօնին մէջ : Անտրաշի
պիտի շարունակէ ուրեմն Աւստրո-
Հունդարիոյ աշխարհավարութիւնը
կառավարել, որ իւր տէրութիւնը
Սլավեան և Ռուսական աղբեղու-
թեան հակադէմ մ'ընելով, Արեւել-
եան Եւրոպիոյ մէջ կարեւոր դեր մը
կատայ անոր :

Կը յիշուի թէ վիտինի Աւստրո-
—Հունդարական հիւպատոսը քանի
մ'ամիս առաջ ծանր թշնամանք մը
կրած էր, երբ Պոլսոյ ոստիկանու-
թիւնն Աւստրիական հպատակին մը
տունը կը մտնէր : Պոլսոյ ոստիկա-
նութեան գլուխ Պ. Քրիսթօ իմանով,
որ Ռուս գնդապետ մ'է, այս օրերս
Բէշլիա գնացած լինելով, որպէս զի
Սօֆիայի համար հրդեհի ջրհաններ
գնէ, վիտինի Աւստրիական հիւպա-
տոսն անմիջապէս հեռագրեւ է Ա-
ւստրիոյ արտաքին գործոց նախա-
րարին, որ Պ. իմանով ձերբակալուի,
իրեն վրայ ձեռք վերցնած լինելուն
համար : Պ. իմանով ձերբակալուելով
դատարանին առջև տարուեցաւ, և
անմիջապէս հարցաքննութեան են-
թարկեցաւ : Բայց հիւպատոսին ըրած
բոլոր ամբաստանութիւնները ժլա-
տեց : Հետեւաբար Բէշլիա բնակող
երկու Պոլսոյ վաճառականաց ե-
րաշխաւորութեամբ արձակեցաւ, խոս-
տանալով որ Բէշլիայէն չմեկնի՝ մին-
չև որ իւր գործին քննութիւնն ա-
ւարտի :

Սօֆիայէն քաջուած Ռիւթերի
հեռագիր մը կը ծանուցանէ թէ
Պոլսոյ իւր նախարարաց խորհրդին
նախագահ Պ. Պալապանօֆի գէտի իշ-
խանութեան ամեն կողմերէն գտն-

դաւանեւ կուգան իբրեւ անկարող և
յետագիւմտեւ, և նախարարաց խոր-
հուրդն առաջարկեւ է Աղէքսանդր
իշխանին, որ նախագահը պաշտօ-
նանկ ընելով անոր տեղ ազատական
մը դնէ, որով հնար կը լինի աղգա-
յին ժողովոյ մէջ կառավարութեան
գէտի կառմեալ մեծամասնութիւնը
լուծել : Իշխանն ընդունել է այս ա-
ռաջարկը, բայց տակաւին ոչ ոք
նախարարաց խորհրդին նախագահ
անուանեւ է : Պոլսոյ իւր մէջ աղա-
տականք հետզհետէ կը զօրանան :

Բ. Դուռն հետեւեալ օրէնքն հը-
րատարակեց թղթագրամին շրջաբե-
րութեան հանուրէն առաջ և շրջա-
բերութեան մէջ գտնուած ժամանակ
կնքուած պարտուց կարգադրութեա-
նն համար :

Յօդ. 1.—1876 յուլիս 24էն, այն
է թղթագրամին շրջաբերութեան
հանուրէն թուականէն առաջ ոսկ-
ւով կամ արծաթ և կամ մէթալիք
դրամով կնքուած բոլոր պարտքե-
րն ոսկւով կամ արծաթ և կամ մէ-
թալիք դրամով պիտի հատուցուին :
Դրուշի հաշուով եղած պարտքերն
ընթացիկ դրամով, այսինքն Օսմ-
լիւրան 140 դրուշի և մէթալիք 130
դրուշի հաշուով պիտի վճարուին,
որ թղթագրամին հանուրէն առաջ
ոսկւոյն և մէթալիքն ընթացիկ գի-
նէրն էին : Ամեն պարտուց դրամագը-
րութեան ինչ դրամով է, տոկոսն ալ նոյն
դրամով պէտք է լինի :

Յօդ. 2.—Թղթագրամին շրջաբե-
րութեան ժամանակ ոսկւով կամ ար-
ծաթ և կամ մէթալիք դրամով կնքե-
ալ պարտքերը նոյն դրամով պիտի
հատուցուին :

Յօդ. 3.—Թղթագրամին հատուկ և
կամ 100 դրուշոց թղթագրամին 100
դրուշի հաշուով կնքեալ պարտքերն,
ինչպէս նաև թղթագրամին վրայ եղող
վարձքերն, որք անվճար մնացած են,
Օսմանեան ոսկին 1 1/2 հատ 100 նոյ
թուղթի հաշուով, կամ յիշեալ պար-
տուց կնքուած ժամանակ ոսկւոյն ու-
նեցած գնոյն համեմատ պիտի հա-
տուցուին :

Յօդ. 4.—Թղթագրամին շրջաբե-
րութեան հանուրէն ետքն առանց
դրամի տեսակն օրոշելու դրուշի
վրայ կնքեալ պարտքերն՝ 100 նոյ
թուղթի 100 դրուշի հաշուով և վերո-
գրեւեալ երրորդ յօդուածին տրա-
մադրութեանց համեմատ պիտի վը-
ճարուին :

Յօդ. 5.—Կառավարութեան գոր-
ծողութեանց վերաբերեալ 1879 մարտ
8ի օրոշումը պիտի պահպանուի կա-
ռավարութեան գիւնանայ և անհա-
տից միջև եղած դրոմագրութեանց,
և հանդատեան թուականաց և օրաց
անուանելու վերաբերեալ գործո-

ղութեանց դալով, ասոնք և սոյն օ-
րինակ գործողութիւնք ներկայ օր-
նայ տրամադրութիւններուն համե-
մատ պիտի կատարուին :

Յօդ. 6.—Ներկայ օրոշման թը-
ւականէն առաջ վճարեալ թերհաշիւ-
ները վաւերական պիտի նկատուին,
և ո և է փոփոխում չպիտի կրեն :

Յօդ. 7.—Թղթագրամին շրջաբե-
րութեան հանուրէն ետքը թղթա-
գրամի հատուկ կամ դրուշի հաշուով
կնքեալ վարձատրութիւնք ներկայ
օրէնքով չպիտի կրնան ջնջուիլ և պի-
տի շարունակեան վաւերական լինիլ :
միայն, 1879 մարտ 8 թուականէն
առաջ կամ ետքն եղող ժամանակի
մ'անվճար մնացեալ վարձքերը՝ ներ-
կայ օրինաց երրորդ յօդուածին հա-
մեմատ պիտի հատուցուին :

Յօդ. 8.—Հին պարտքերն ասկէ
առջև թղթագրամին ջնջման ժամա-
նակ հանուած յատուկ օրինաց հա-
մեմատ պիտի կարգադրուին, և հե-
տեւաբար ներկայ օրինաց տրամա-
դրութիւնքն անմիջ չեն պատկանիր :
Այս օրոշումը Կ. Պոլսոյ մէջ և
թղթագրամին շրջաբերութիւն ունե-
ցած դաւառաց մէջ գործադրելի պի-
տի լինի :

7 օգոստ. 1879

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Աթէնք 26 օգոստ.

Էթնիքոն ֆնէլմա Հիլիսական լրագր-
ըն իւր այս աւտր թուով հրատարա-
կած մէկ յօդուածին մէջ այս կարծիքը
կը յայտնէ թէ Բ. Դուռն Հիլիսական
խնդրոյն նկատմամբ պատրաստ է մեծ
տէրութեանց հաւաքական կարծեաց հա-
մաձայնիլ, որ վեհաժողովոյ Թ. Բ. Բ. Բ.
տեսնադրութեան վրայ հիմնեալ է : Ուս-
տի, կ'ըսէ յիշեալ թերթը, կը կար-
ծեմք որ այս խնդրին ի մօտոյ կը լուծուի
բայց եթէ հակառակ մեր ակնկալու-
թեանց Դուռն մեր բարեկամութեան օ-
գուանները չձանշելով, իւր գաղափարին
վրայ յարատեւէ, այդ պարագային մէջ
Յունաստան կը պարտի տակաւ թողուլ
Արեւելեան խնդրին և լրջօրէն պատ-
րաստուիլ պատահականութեանց դէմ,
որք քիչ ժամանակէն պիտի ծաղկն :

« Յունաստան իւր նաւատորմին զօ-
րութիւնն աւելցնելով, և բանակին վը-
րակազմութեան նոր օրէնքը դրոմագրե-
լով, երեք տարիէն 60,000 կանոնաւոր
զօրք պիտի ունենայ, և այս տարրերով
պիտի կրնայ աւելի արմատական կերպիւ
փութացնել Արեւելեան խնդրոյն լուծումն
և լուսաւոյն կերպիւ սպառնալ իւր շա-
հերը : »

Փարիզ 26 օգոստ.

Ռուսներոյ արտաքին գործոց նախա-
րար Պ. Պօլեւսքօ այս ատուտ Տիէլի
գնաց Լորա Սալոնիկի հետ խորհը-
ղակցելու, որ հոն կը գտնուի այժմ :
Պ. Պօլեւսքօ Փարիզ վերադարձած
ժամանակ նոր տեսակցութիւն մը պիտի
ընէ Պ. Վալսինիկ օնի հետ :

$l_1 = n_1 k_1 - m_1 p_1$		$l_2 = n_2 k_2 - m_2 p_2$	
d_1, m_1	d_2, m_2	d_1, m_1	d_2, m_2
11 30	5 25	11 30	5 25 $q_2 p_2$
12	6	12	6
12 30	6 35	12 30	6 25
1	8	1	8
1 30	8 40 $q_2 l_2 / p_2 m_2$	1 30	8 45
2	9 20	2	9 20
2 30	10	2 30	10
3 5	10 30	3 5	10 30
3 45	11	3 45	11 5
4 30	11 30	4 30	11 35
5	12	5	12 5